



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

10

ԳԼՈՒԽ ԽԵ ՎԱՍՆ ԱՄԲԱՍՏԱՆԵԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

Եպիսկոպոս ամբաստանեալ առաջի հաւատարմաց ոմանց կամ հաւատացելոց, կարդալ զնա հարկաւոր է եպիսկոպոսաց: Եթէ եկեալ խոստովանեսցի, յանդիմանեալ զնա՝ սահմանեսցի պատուիսան: Ապա թէ կարդացեալ զնա՝ ոչ լուաւ, կոչեսցի երկրորդ անգամ՝ առաքելով առ նա երկու եպիսկոպոսունք: Ապա թէ եւ այսպէս ոչ լուաւ, կոչեսցի երրորդ անգամ՝ դարձեալ երկուց եպիսկոպոսաց առաքելով առ նա: Ապա թէ եւ այնպէս արհամարհեալ՝ ոչ եկեսցէ ի ժողովն, վճիռ հատցի այնպիսոյն՝ որ ինչ արժան թուեսցի, որպէս զի մի՛ շահել ինչ թուեսցի ի փախուցելոյն: Այդ ճշմարիտ իրաւունք են ամբաստանելոց առնել ըստ այդմ: Վճիռն այնպէս ընտրին, զի գպատճառն ստուգագոյն գիտելով՝ հատցի:

ԳԼՈՒԽ ԽԶ ՎԱՍՆ ՎԿԱՅԻՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ

Եւ ի վկայութիւն զթերահաւատ որ մի՛ ընդունել եւ ոչ զհաւատացեալ զմի, քանզի ի բերանոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն բան:

ԳԼՈՒԽ ԽԷ ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ ՉՁԵՌՆԱԴՐԵԼ ԶՈՔ ՅԻՒՐՈՑՆ ԱՌԱՆՑ ԿԱՄԱՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԱՑ

Չի ոչ է պարտ եպիսկոպոսին՝ եղբօր, կամ որդոյ, կամ այլում ազգականի շնորհել զպատիւ եպիսկոպոսութեան, որպէս ինքն կամի՝ ձեռնադրել ժառանգաւոր եպիսկոպոսութեան իւրոյ: Չէ արժան զայն շնորհել մարդկային սիրոյ, քանզի եւ ոչ զեկեղեցին Քրիստոսի ընդ ժառանգութեամբ դնել: Ապա թէ ոք արասցէ զայս, անհաստատ լիցի ձեռնադրութիւն նորա, եւ ինքն որոշեսցի: Կանոնական իրաւունքն այսպէս է. զի ոչ իշխէ իւրոցն տալ, եւ ոչ միայն ձեռնադրել, եւ ոչ զեկեղեցի ժառանգութիւն առնել: Ապա թէ յանդգնի, հոգեւոր դատաստան է. թէ հաճոյ բազմացն թուեսցի՝ օրհնութեամբ մասնաւորաւ հաստատել, ապա թէ ոչ՝ նոյն անհաստատ կացցէ, եւ ինքն որոշեսցի, մինչեւ զարժանաւոր ապաշխարութիւնն ցուցցէ:

ԳԼՈՒԽ ԽԸ ՎԱՍՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ, ՈՐ ԱՐԿԱՆԷ ԶԱՆՁՆ ԻԻՐ ՅԵՐԿՐԱԻՈՐ ՀՈԳ

Ոչ է պարտ եպիսկոպոսին արկանել զինքն յերկրաւոր հոգս, այլ պարապել եկեղեցական պիտոյից, ապա թէ ոչ՝ ի բաց դնիցէ, զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել, ըստ տէրունական բանին: Եւ զայս ոչ յաղագս հոգալոյ զիշխանացն պարտինք իմանալ միայն, այլ թէ եւ ըստ պայմանի վիճակ առցէ յայլազգեաց, որպէս եւ այժմ գործեն բազումք յեպիսկոպոսաց եւ ի քահանայից, որոց եւ տէրունականն զարժանաւորն բերէ դատաստան, ասելով՝ ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել: Յայտ է, զի զանգեղջսն հրամայէ լուծանել իրաւամբք:

ԳԼՈՒԽ ԽԹ ՎԱՍՆ ԶԾԱՌԱՅՍ ԵՐԷՑ ՕՐՀՆԵԼ ԿԱՄ ՍԱՐԿԱԻԱԳ

Զծառայս ի ժառանգաւորութիւն ընձեռել առանց կամաց տերանց ոչ հրամայենք, ի տրտմութիւն ստացողացն, քանզի տանց կործանումն այս գործէ: Ապա թէ երբէք արժանի երեւեսցի ծառայն առ ի ձեռնադրութիւն աստիճանի, որպէս Ոնէսիմոսն երեւեցաւ, եւ թողացուցեն տեսրքն իւր եւ ազատ ի տանէն ի բաց առաքեսցեն, եղիցին: Դատաստան կանոնացս հրամայէ զայսոսիկ պահել անգայթակղ զեկեղեցի, զի մի՛ պատճառաւ բարեպաշտութեան վնաս ինչ գործեսցեն եւ տեղի տայցեն չարախօսացն զմէնչ:

ԳԼՈՒԽ Ծ ՎԱՍՆ ԱՆԱՐԳՈՂԱՑ ԶԹԱԳԱԻՈՐՍ ԵՒ ԶԻՇԽԱՆ

Եթէ որ թշնամանեցէ գթագաւորս եւ զիշխանս անիրաւաբար, պատուիաս կրեցէ. եթէ ժառանգաւոր է՝ լուծցի, իսկ եթէ ժողովրդական՝ որոշեցի: Եւ զայս դատաստան դատել եպիսկոպոսաց եւ վարդապետաց է, զի պատկեր են Աստուծոյ եւ թագաւորք, եւ իշխանք: Եթէ անարգողն ժառանգաւոր իցէ, իրաւացի է լուծանել, եւ աշխարհական որ՝ որոշել, մինչեւ զղշացի: Եւ այդ հաստատեցի այժմ:

ԳԼՈՒԽ ԾԱ ՎՆԱՍՆ ՈՐ ՏՂԱՅ ԿՈՐՈՒՍԱՆԵՆ ԿԱՆԱՅՔ

Եթէ հեղձուցանէ որ զտղայ իբրեւ զխեղ կամ ի շնութեան, կամաւ զայն արարեալ՝ փոխանակ ինքն մեղցի, զի որպէս ոչ է հնար ի վեր կացուցանել, նոյնպէս եւ ոչ ապաշխարել: Եւ զի ըստ Օրինացն ականայիցն եւ ոչ կամաւորացն ապաստանի եղել ի քաղաքսն ապրել, եւ զի ըստ Օրինացն յաղագս հաւատացեալ Հրէիցն վարի, ուստի եւ յետոյ եւ այդմ տուաւ ապաշխարութիւն: Եւ այդոցիկ կամաւոր խոստովանողացն՝ ապաշխարութիւն, իսկ անզեղջիցն՝ արեան դատաստան:

ԳԼՈՒԽ ԾԲ ՎԱՍՆ ԳՈՂՈՑ ԵՒ ԱՍՊՆՉԱԿԱՆԱՅ ՆՈՅԱԳողթ կամ ասպնջականք նոցին, ըստ կամաց եկեղեցոյն գնուսա մահու մատնել արժանի լիցի, զի հնացեալ աւագակքն եւ իւր հացամեծարքն միշտ լինին ի մահ դատապարտեալք: Չայդր զկնի պարտ է դատաւորին հետեւել: Եւ զայս յաղագս մարդագողաց եւ աւագակաց ասէ եւ ըստ Օրինացն հրամայէ ի մահ դատապարտել, նաեւ՝ զկամակից հացտուն. եւ ըստ եկեղեցոյ օրինաց եւս կարգէ: Բայց զկնի կանոնաց այդ եւս ցուցեալ է դատաստան:

ԳԼՈՒԽ ԾԳ ՎԱՍՆ ՈՐ ԱՌՈՒԳՆԱՅՔ ԱՌՆԵՆ

Չառեւանկսն, թէ եւ որդի ծնցի, եւ հայր եւ մայր եւ աղջիկն չկամիցին, մի՛ ինչ վնաս կրեցէ ի չարագագան հոգոյն, անդրէն դարձուցանել: Յայտ է, թէ պսակեալ եւ թէ առանց պսակ ընդ բռնապսակն է արտաքոյ կամաց: Եթէ ձեռնհաս իցեն, անխիղճ է անդրէն դարձուցանել եւ կամօք պսակել: Իսկ եթէ յետոյ կամեցան, ապաշխարութեամբ կարգեցին, որպէս եւ զայս ցուցեալ է կանոնաց: Եւ այդ ճշմարիտ դատաստան է յեկեղեցի:

ԳԼՈՒԽ ԾԴ ՎԱՍՆ ԾԱՌԱՅԻՑ ԱԶԱՏԵԼ ԸՍՏ ԱԻՐԻՆԱՅՆ

Եթե պատահի քրիստոնէի գնել ծառայ քրիստոնէայ, ըստ Օրինացն՝ վեց ամ ծառայել եւ յեւթն ամին ելանել: Եղիցի մեզ՝ յորժամ ըստ գնոյ իւրոյ ծառայեսցէ, ելցէ ազատս: Եթէ ինքն միայն մտեալ իցէ, միայն ելցէ, եթէ կնաւ հանդերձ մտեալ իցէ, ելցէ եւ կինն ընդ նմա: Ապա թէ տէրն իւր տացէ կին նմա, եւ ծնանիցի նմա ուստերս եւ դստերս, կինն եւ որդիքն տեսոն լինին, եւ նա միայն ելցէ փրկանօք: Ապա եթէ պատասխանի տուեալ ասիցէ ծառայն՝ սիրեցի գտէր իմ, եւ զկին իմ, եւ զորդիս իմ, եւ ոչ գնասցէ յազատութիւն, տարցէ գնա տէրն իւր յեկեղեցի Աստուծոյ եւ քահանայիք, եւ հաւատարիմ վկայիք, եւ գրով առցէ գնա ծառայ յաիտեան: Եւ մի՛ յաղագս այնորիկ փոյթ կալցէ, թէ եւ կարիցէ ազատ լինել, զի ըստ առաքելոյ՝ ի Տէր կոչեցեալ ծառայն ազատ Տեսոն է:

ԳԼՈՒԽ ԾԵ ՎԱՍՆ ՈՐ ԶԴՈՒՍՏՐ ԻԻՐ ՎԱՃԱՌԷ ՅԱՂԱԽՆՈՒԹԻՒՆ

Իսկ եթէ պատահի ումեք վաճառել զդուստր իւր, ըստ որում եւ իցէ պատճառի, յաղախնութիւն առն հաւատացելոյ, մի՛ իբրեւ զաղախին վճռաւ վաճառիցէ, զի թէ ոչ իցէ յաչս տեսոն իւրոյ հաճոյ, որում հաստատեցան, փրկեսցէ գնա հայրն իւր: Բայց յազգ օտար չէ իշխան վաճառել գնա տէր իւր, զի անարգեաց գնա. ապա թէ որդոյ իւրում հաստատեսցէ գնա, ըստ օրինաց դստերս արասցէ նմա: Ապա թէ ոչ իւր եւ ոչ որդոյն հասանի ի կնութիւն, ի լնուլ ամի սպասաւորութեան նորա չափով գնոյ իւրոյ՝ ազատ լիցի ձրի: Ապա թէ կանխաւ հայր իւր կարիցէ փրկել գնա, փրկեսցէ:

ԳԼՈՒԽ ԾԶ ՎԱՍՆ ԱՅԼԱԶԳԻ ԾԱՌԱՅԻՑ ԵՒ ԱՂԱԽՆԵԱՑ

Եթէ գնեսցէ ըք ծառայ կամ աղախին այլազգի, եթէ յանձն առնուն մկրտիլ՝ ընդ փրկանօք լիցին, գնոյ չափ ծառայեալք՝ ազատք լիցին, ապա թէ ոչ կամիցին՝ վաճառել իշխան լիցին: Այլ մի՛ յաղագս ոչ ազատելոյ հեղգասցին մկրտել: Իսկ մկրտելոցն ազատիլ եւ կամ ոչ՝ նոյն լիցի, որպէս ի բնէ քրիստոնէից. նմանապէս եւ՝ աղախնեացն:

ԳԼՈՒԽ ԾԷ ՎԱՍՆ ԱՆԱՐԳՈՂԱՑ ՉՀԱՅՐ ԿԱՄ ՉՄԱՅՐ

Եթե որ անարգի յորդոյ իրոյ, եւ կամ թէ այլ անօրէնութիւն գործեն որդիքն առ օտարս, վասն անարգանացն հրաման տայ Օրէնքն, զի իշխանութիւն ունի հայրն տանել գորդին իւր առաջի դատաւորաց, զի թէ յանձին կալնու գմեղանս իւր եւ այլ ոչ արասցէ՝ խրատեսցի եւ արձակեսցի, ապա թէ ոչ՝ պատժեսցի, զի ի հնումն, ըստ Օրինացն, զհայր եւ զմայր անարգողսն զերկճղի փայտէ կախէին: Այլ վասն չար գործոց, զոր արարին առ օտար մարդիկ, ոչ տայ նմա հրաման Օրէիքս բանբասել գորդիսն առաջի դատաւորին:

ԳԼՈՒԽ ԾԸ ՎԱՍՆ ՈՐՔ ՉՏՂԱՅՍ ԳՈՂԱՆԱՆ

Որ որ գողացի յորդոցն Իսրայէլի եւ վաճառիցէ զնա, եւ առ ով որ գտցի գողութիւնն, մահու մատնեցի: Իսկ մեզ փոխեալ լիցի լրմամբ, եթէ քրիստոնեայ զքրիստոնեայ գողացեալ վաճառէ յայլազգիս, եւ ի յայտ եկեսցէ չար գործն, յաղագս ապաշխարութեան հասանելոյ մի՛ մեռցի մահու, այլ ի բանտ արկեալ՝ երաշխաւորօք զառեալ զինն յիցէ եւ դարձուցէ զվաճառեալն. ապա թէ չիցէ հնար՝ զզինն ի գողացելոյ տէրն տացեն եւ խրատեալ յաչսն՝ արձակիցեն, եւ կամ նշան դիցեն. իսկ անգղջիցն լիցի խրատ:

ԳԼՈՒԽ ԾԹ ՎԱՍՆ ԲԱՄԲԱՍՈՂԱՑ ՉՀԱՅՐ ԿԱՄ ՉՄԱՅՐ

Որ բանբասէ զհայր կամ զմայր իւր, մահու մեռցի: Չյայտնի բանբասողաց եւ զյանցանս ծնողացն հրապարակողաց զմահու մեռանիլն ասէ, այլ ըստ մեզ՝ դատաստանաց հարկանողաց զծնողսն լիցի, որպէս ցուցեալն է:

ԳԼՈՒԽ Կ ՎԱՍՆ ՈՐՔ ԿԱՏԱԿՈՎ ՎՆԱՍԵՆ ՉԻՐԱՐ

Եթէ կագիցեն արք երկու, եւ հարկանէ որ զընկեր իւր քարի կամ բռնցի, եւ ոչ մեռանիցի, այլ դնիցի ի մահիճս, եթէ յառնիցէ այրն եւ շրջեսցի արտաքս ի ցալոյ, անպարտ լիցի՝ որ եհարն, բայց զխափանածոյն եւ զբժշկութեանն տացէ, իսկ եթէ մեռանի՝ զզինն առնուն: Այս դատաստան լրմամբ յՕրինացն ասացաւ, եւ մեզ գնոյն ամբողջ պահելոյ արժան է:

ԳԼՈՒԽ ԿԱ ՎԱՍՆ ԾԱՌԱՅԻՑ, ՉՈՐ ՍՊԱՆԵՆ ՏԵԱՐՔՆ ԻԻՐԵԱՆ

Եթե որ հարցե զծառայ իւր կամ զաղախին իւր գաւազանաւ, եւ մեղցի ի ձեռանէ նորա, դատաստանաւ վրէժխնդրութիւն լիցի ի տերանց: Տեսոնն ասէ եւ դատաստանի ի գաւազանն, եւ ի սուրն, եւ յայլսն այսպիսիս, միանգամայն յապատամբութիւն նոցա եւ ի պատճառն լինել: Թէ այլագգիք իցեն եւ թէ քրիստոնեայք, ըստ այնմ գինք արեանն տուժեցի: Բայց եթէ մի օր կամ երկու կեցցէ, մի՛ խնդրեցի վրէժն, զի գինք արծաթոյ իւրոյ են, այլ ապաշխարութեամբ լիցի:

ԳԼՈՒԽ ԿԲ ՎԱՍՆ ՈՐ ՉՅՂԻ ԿԱՆԱՅՍ Ի ԿՌՈՒԵԼ ԱՐԱՆՑ ՀԱՐԿԱՆԵՆ

Եթէ կռուիցեն արք երկու եւ հարկանիցեն զկին յղի, եւ ելանիցէ սաղմն, որ ի յանձն կայր, կէս վնասու տուժեցի, որչափ ինչ արկանիցէ այրն այնմ կնոջն եւ տացէ աղաչելով: Ապա թէ կերպարանեալ իցէ, տացէ անձն ընդ անձին: Յայտնի է եւ դատաստանն աստուածային ըստ սահմանի, ապա թէ ոչ մի է նկարեալն եւ յանձն որ կայրն, ըստ յուսոյ առնն ծնանիլ կնոջն, զի թէ եւ բազում միջոց է նկարելոյ եւ աննկարի: Այլ տացէ անձն ընդ անձին. եւ այս դատաստան փոխեալ տուգանօք եւ ապաշխարութեամբ վճարեցի, որպէս յայտնեալ է դատաստանօք թագաւորացն, համեմատելով ընդ այնոսիկ:

ԳԼՈՒԽ ԿԳ ՎԱՍՆ ՀԱՐՈՒԱԾՈՑ

Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձեռն ընդ ձեռին, ոտն ընդ ոտին, խարան ընդ խարանի, վեր ընդ վիրի, հարուած ընդ հարուածի: Եւ այս դատաստան աստուածային, շնորհօք Աւետարանին, տուգանօք վճարեցի ընդ բանականի գնոյ արեանն համեմատեալ: Սակայն յառաւելն եւ ի նուագն ի զգայութիւնսն քննութիւն լիցի եւ յանդամսն եւ ի գործսն, եւ ի բաժանումն յիրաքանչիւր անդամսն եւ զգայութիւնսն քսան եւ վեց դահեկան եւ կէս դանգ, գարի մի պակաս:

ԳԼՈՒԽ ԿԴ ՎԱՍՆ ԾԱՌԱՅԻՑ ՀԱՐՈՒԱԾՈՑ Ի ՏԵՐԱՆՑ

Եթէ հարցէ որ զակն ծառայի իւրոյ եւ կամ զաղախնոյ իւրոյ եւ կուրացուցէ, ազատեսցէ զնա ազատս փոխանակ ական նորա: Եւ եթէ զատամն ծառայի իւրոյ կամ զատամն աղախնոյ թափեսցէ, ազատեսցէ զնոսա ազատս փոխանակ ատաման նոցա: Թերեւս աստուածային Օրէնքս զայլ եւս զգայութիւնս եւ զատամն միահաւասար համարեցաւ, նմանապէս եւ ելանել հրամայէ ծառայից եւ աղախնեաց վասն խլելոյ ատամանց նոցա: Եւ այս դատաստան անփոփոխ կացցէ մեզ յՕրինաց առ հաւատացեալս: Իսկ եթէ յայլագգեաց իցէ ծառայն եւ աղախինն, վաճառիցէ որքան արժանն է՝ պակաս եւ կամ ընդ կէս զնոյ, ըստ որում ի դէպ իցէ դատաստանն իրաւամբք: Սակայն իշխան լիցի թէ եւ ոչ կամի վաճառել:

ԳԼՈՒԽ ԿԵ ՎԱՍՆ ԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՏՈՒԼ ՉԱՅՐ ԿԱՄ ՉԿԻՆ

Եթէ հարկանէ ցու զայր կամ զկին, եւ մեռանիցին, ցուլն քարկոծ լիցի, եւ միսն մի՛ կերիցի, եւ տէր ցլոյն անպարտ լիցի: Եւ այս դատաստան ըստ Օրինացն հաստատուն մեզ կացցէ: Չենու զցուլն՝ զքարկոծելոյն լցցէ զտեղի, եւ վաճառել, յայլագգիս զմիսն, եւ զգինն յաղքատս տացեն, եւ հաստատուն լրմամբ ասացաւ, թէ՛ եւ տէր նորա անպարտ լիցի: Ապա թէ ցուլն հարկանող էր յերէկն եւ յեռանդն, եւ բողոքեալ էին առ տէրն իւր, եւ նա անփոյթ արար, եւ սպան զոք, ցուլն քարկոծ լիցի, եւ տէր ցլոյն մեռցի: Իսկ եթէ փրկանք անկանիցին ի վերայ նորա, տացէ փրկանս ընդ անձին իւրում ըստ ամենայնի, որչափ ինչ արկանիցի նմա, եւ տէր նորա փրկեսցի: Եւ եթէ զուստր կամ զդուստր հարկանիցէ, ըստ նմին օրինակի արասցեն: Եւ այս իրաւունք փրկանօք մեզ սահմանեսցի ըստ Օրինացն եւ ոչ մահուամբ, զի զողորմութիւն պատճառաւ Օրէնքն ընդ ստուգութեանն խառնէ, եւ զի ցուցեալ է փրկանքն ի գինս արեան ի դատաստանս թագաւորացն: Իսկ եթէ զծառայ կամ զաղախին հարկանիցէ ցուլն, երեսուն կրկին սատեր արծաթոյ տացի տեառն նորա, եւ ցուլն քարկոծ լիցի: Իսկ զգին ծառային այդոքիկ նշանակէ տալ, եւ ցլուն ցուցեալ է: Սակայն ընդ դատաստանի ի քրիստոնեայն եւ յայլագգին ընտրութիւն լիցի: Ապա թէ բեկանիցէ կամ խափանէ ի զգայութեանցն, եւ չիցէ գիտակ վնասու ցլոյն, անպարտ լիցի տէրն նորա, իսկ թէ բողոքեալ իցեն, եւ չիցէ ի միջոյ բարձեալ, տուժեսցի բժշկութեանն եւ զխափանածոյն տացէ: Եւ այս յիրանքանչիւրսն լիցի դատողութեամբ:

ԳԼՈՒԽ ԿՉ ՎԱՍՆ ԹԷ ՀԱՐԿԱՆԻՑԷ ՑՈՒԼ ՉՑՈՒԼ

Իսկ եթե հարկանիցե ցույ զցույ ուրուք, եւ մեռանիցի, վաճառեցեն զցույն կենդանի եւ բաժանեցեն զգինս նորա երկու տէրքն, եւ զցույն սպանեալ վաճառեցեն եւ բաժանեցեն: Ապա թէ գիտէր տէրն նորա, որ վնասարար էր, եւ նմա բողոքեալ էին, եւ նա անփոյթ արար, տուժեցի ցույն ընդ ցլի: Այս է տուժիլն. ցլոյն փոխան զցույն կենդանի տացեն, եւ մեռեալ ցույն սպանողի տիրոջն փոխան լիցի: Եւ այս դատաստան հաստատուն մեզ յՕրինացն կայցէ: